Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.364

Archaeological Research of the "Karmir (Red) Church" in Tsovataq Village

Vardges Safaryan
https://orcid.org/0009-0003-7687-1929
Institute of Archaeology and Ethnography NAS RA
safarianvardges@gmail.com

Keywords: Artsakh, "Karmir (Red) Church", Tsovataq, Melik Pashayan, Bishop Davit, Sargis Jalalyants.

After the 2020 Artsakh 44-day war, a vast number of monuments remained under Azerbaijani control. Archaeological studies continued in the parts of Artsakh Republic that remained under its control during 2021-2022.

This article presents the main results of the archaeological research conducted in the area of the "Karmir (Red) Church" in Tsovataq village, Martuni district, Artsakh Republic.

The excavations revealed that the "Karmir (Red) Church" is a single-nave, vaulted hall with a semi-circular apse, constructed with rough-hewn stones.

Ծովատեղ գյուղի «Կարմիր եկեղեցու» հնագիտական հետազոտությունը

Վարդգես Սաֆարյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հիմնաբառեր՝ Արցախ, «Կարմիր եկեղեցի», Ծովատեղ, Մելիք Փաշայան, Դավիթ եպիսկոպոս, Սարգիս Ջալալյանց:

2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից հետո հսկայական թվով հուշարձաններ մնացին ադրբեջանական վերահսկողության տակ: Արցախի Հանրապետության հսկողության տակ մնացած հատվածում 2021-2022 թվականներին շարունակվել են հնագիտական ուսումնասիրությունները:

Սույն հոդվածում ներկայացվում են Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղի «Կարմիր եկեղեցու» տարածքում իրականացված հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները:

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 364-373.

Received: 21.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Պեղումները ցույց տվեցին, որ «Կարմիր եկեղեցին» միանավ թաղածածկ կիսաշրջանաձև խորանով սրահ է՝ կառուցված կոպտատաշ քարով:

Археологическое исследование церкви Кармир села Цоватех

Вардгес Сафарян
Институт Археологии и этнографии АН РА

Ключевые слова: Арцах, «Красная церковь», Цоватех, Мелик Пашаян, епископ Давид, Саргис Джалалянц.

После 44-х дневной войны огромное число памятников Республики Арцах остались под контролем азербайджанцев. На оставшейся под нашим контролем территории в 2021-2022 годах продолжались археологические исследования.

В данной статье представлены основные итоги археологического исследования, осуществленного на территории церкви «Кармир» села Цоватех Мартунинского района Республики Арцах.

Раскопки показали, что церковь «Кармир» представляет собой однонефное сводчатое здание с полукруглой абсидой, построенное из грубо оттесанных камней.

* * *

Ներածություն: 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմից արդյունքում հսկայական թվով հուշարձաններ անցան ադրբեջանական վերահսկողության տակ: Ադրբեջանը շարունակեց պատմամշակութային ժառանգության ոչնչացումը՝ խախտելով միջազգային բոլոր նորմերը:

2021-2022 թվականներին Արցախի Հանրապետության՝ հայկական հսկողության տակ մնացած հատվածում շարունակվել են հնագիտական ուսումնասիրությունները:

Սույն հոդվածում ներկայացվում են Ծովատեղ գյուղի «Կարմիր եկեղեցու» տարածքում իրականացված հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները:

«Կարմիր եկեղեցի» համալիրը, որը հայտնի է նաև Մելիք Փաշայանների դամբարան անունով, գտնվում է Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղի արևելյան կողմում՝ հին գերեզմանոցի տարածքում, մի բլրի վրա (աղ. I, 1):

Հուշարձանի մասին տեղեկություններ են պահպանվել Սարգիս Ջալալյանցի, Մակար Բարխուդարյանցի, Երվանդ Լալայանի աշխատություններում [Ջալալեանց 1858, 332-334; Բարխուտարեանց 1895, 106-108; Լալայեան 1897, 49-50]:

Ուշագրավ է, որ նշված հեղինակների վկայությունները հուշարձանի մասին տարբերվում են իրարից:

Ըստ Ջալալյանցի՝ Ծովատեղ գյուղի «յարևելս կոյս՝ի վերայ փոքրիկ բլրոյ գոնխիտ առ խիտ շիրիմք, յորոց միջի զտանի քառախորան, սագաշէն եկեղեցի, յորոց երեքն են ընդ երկրաւ, իսկ մին կիսով չափ՝ի վեր քան զմակերևոյթ հողոյ, ըստ իմիք նման ակլդամայից, ըստ որում՝ի նոսա են գերեզմանք Մէլիքաց բազմաց, ընդ որո և շիրիմք մէլիք փաշայի և Սահակ եպիսկոպոսի» [Ջալալեանց 1858, 332 -333]:

Ըստ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի՝ «այս անուամբ է կոչուում Մելիք Փաշաեանցների դամբարանն, որ կայ գիւղիս արևելեան կողմում, ոչ այնքան հեռի, մի բլրակի վերայ։ Դամբարանիս շուրջն հանգիստներ են հնուց խիտ առ խիտ ամփոփուած, որի մեջ կան և խաչազարդ տապանաքարեր։ Դամբարանս ստորերկրեայ է և բաղկացած չորս պատկից մատուռներից, որոնց Ա-ն մեծ. Բ-ն միջակ մատուռներ են։ Գ-ն եկեղեցի է՝ Դ-ն փոքր մատուռ է։ Լայնութիւնից լայնութիւն պատկից մատուռներս հաղորդակցութիւն ունին միմեանց միջնադռներով։ Ա-ն մեծ մատուռն վնասուած է գագաթնագիծ ճեղքուածքով, որի՝ հարաւային պատն և դուռն միայն են երևում, քանզի ստորերկեայ են բոլոր մատուռներս» [Բարխուտարեանց 1895, 106]:

Այսպես, եթե Սարգիս Ջալալյանցը խոսում է մեկ քառախորան եկեղեցու մասին, որի միայն մեկ խորանը «կիսով չափ՝ ի վեր քան զմակերևոյթ հողոյ», իսկ «երեքն են ընդ երկրաւ», ապա Մակար Բարխուդարյանցը նշում է՝ «Դամբարանս ստորերկրեայ է և բաղկացած չորս պատկից մատուռներից…»։

Եկեղեցու շինարարությունը մանրամասնող արձանագրությունը տեղում չի հայտնաբերվել։ Սակայն և՛ Սարգիս Ջալալյանցը, և՛ Մակար Բարխուդարյանցը հայտնել են, որ նախկինում տեսել են այն։ Սարգիս Ջալալյանցն արձանագրում է. «Ի դրան եկէղեցուայ ՋԾԵ թուին «Ես՝ Պետրոս եպիսկոպոս, յիշատակ է եկեղեցի զվանքս, որ լինի սա դամբարան և շիրիմ մերոց նախնեաց» [Ջալալեանց 1858, 333]: Փաստորեն, ըստ Սարգիս Ջալալյանցի, եկեղեցին կառուցվել է 1506 թվականին Պետրոս եպիսկոպոսի կողմից։

Սակայն Մակար Բարխուդարյանցը այլ բան է ներկայացնում՝ նշելով, որ եկեղեցին կառուցվել է 1621 թվականին Դավիթ եպիսկոպոսի կողմից. «*Ա.* Մատրան ճակատակալ քարի վերայ. «Թվ. ՌՀ. Դաւիթ եպիսկոպոս. յիշատակ է եկեղեցի վանքս որ լինի սա դամբարան և շիրիմ մերոց նախնեաց» [Բարխուտարեանց 1895, 108]:

Մ. Բարխուդարյանցին կրկնում է Երվանդ Լալայանը՝ բառացիորեն մեջբերելով Բարխուդարյանցի ընթերցածը [Լալայեան 1897, 49]:

Հարկ է նշել, որ եկեղեցու տարածքում պահպանված խաչքարերը թվագրվում են 12-13-րդ և 14-րդ դարերով։ Ընդհանրապես, բոլոր արձանագիր խաչքարերը, որոնց մասին խոսում են Ս. Ջալալյանցը, Մ. Բարխուդարյանցը, Ե. Լալայանը ներկայացնում են միայն 16-րդ դարը։ Այսպես, Ս. Ջալալյանցը ներկայացնում է 4 արձանագրություն, որոնցից երեքն ունեն հետևյալ թվականները՝ 1506, 1566, 1576։ Մակար Բարխուդարյանցի կողմից ներկայացված 11 արձանագրությունից չորսը կրում են 1576, 1586, 1566, 1621 թվականները (վերջին երկուսն արդեն տեղում չէին)։ Երվանդ Լալայանը նշում է 9 արձանագրություն՝ թվագրված 1566, 1576, 1586, 1621 թվականներով։

Բոլոր այս թվակիր խաչքարերից տեղում մնում են երկուսը՝ խորանի հյուսիսային ու հարավային կողմերում տեղադրված խաչքարերը՝ 1576 և 1586 թվականներով։ Հյուսիսային կողմի խաչքարի չափերն են՝ բարձր. 1,90 մետր, լայն. 0,93 մետր, հաստ. 0,31 մետր, հարավայինի՝ բարձր. 1,61 մետր (նշենք, որ ներքևի հատվածը մնացել է բետոնի մեջ ու չի դիտվում. այնպես որ կարելի գումարել ևս 0,25-0.30 մետր), լայն. 0,86 մետր, հաստ. 0,29 մետր (աղ.II, 1, 2):

Հնագիտական հետազոտությունը: Կարմիր եկեղեցին բուսականությամբ պատված և ավերակված վիճակում էր: Խորանի գագաթին (դրսից) աճել էր փռշնի բազմաճյուղ ծառ: Եկեղեցու ուրվագծվող ամբողջ դահլիճը 0,50-0,80 մետր հաստությամբ ծածկված էր քարի ու հողի կույտով, որի տակ սկսվում է մաքուր կավահողի շերտը:

2022 թվականին այստեղ իրականացվել են պեղման և մաքրման աշխատանքներ (հնագիտական արշավախմբի ղեկավար՝ Վարդգես Սաֆարյան, ճարտարապետ՝ Մանվել Սարգսյան): Հնագիտական պեղումների հիմնական նպատակն էր գտնել մելիք Փաշայաններին պատկանող դամբարանը, սակայն համապատասխան թաղումներ այդպես էլ չեն հայտնաբերվել: Փոխարենն ի հայտ են եկել տարբեր ժամանակներին պատկանող խաչքարերի բեկորներ, խեցանոթների բեկորներ, դրանց թվում կավե քամիչի բեկորներ, տանիքի ծածկի սալիկների մասեր (աղ. III, 1, 2, 3, 4): Եկեղեցու դահլիճում թափված հողի մեջ գտնվել է խաչքարի ևս մի զարդանախշ բեկոր, ինչպես նաև կրաքարե փոքր կտոր՝ արձանագրությամբ. ընթերցվում են հետևյալ տառերը երկու տողով՝ «...սայ ... ոտ.. » (աղ. III, 5):

Մասնավորապես հետաքրքիր է 12-13-րդ դարերին վերաբերող խաչքարի ներքնամասը, որը որպես շինաքար տեղադրվել է եկեղեցու ավագ խորանի հյուսիս-արևելյան անկյունում: Այն ներկայացնում է Արցախի այդ ժամանակի խաչքարերում բավականին տարածված, «ընտանեկան դիմանկարի» թեման, ուր հարազատների միջավայրում ներկայացված է հանգուցյալը [Պետրոսյան 2008, 307]: Արձանագրությունը, թեև վնասված է, բայց տեքստը հիմնականում հնարավոր է վերականգնել. «[Ես Գ]որգ [կա]նգեցի [խ]աչս ի վ[եր]ա տապանակ[ի] [ո]րդո իմո[յ] [Թ]եւանի: Որ կարդ[աք՝ յաղաւթս յիշեցէք]»: Արձանագրությունը հրապարակվում է առաջին անգամ (աղ. IV, 1):

Եկեղեցու հարավային պատի մեջ, հորիզոնական դիրքում ագուցված են 12-13-րդ դարերի այլ խաչքարեր ևս, իսկ հյուսիսային և արևմտյան պատերում որպես շինաքար օգտագործվել են տապանաքարեր (աղ. IV, 2):

Դիվան հայ վիմագրության 5-րդ հատորում Սեդրակ Բարխուդարյանը, խոսելով Կարմիր եկեղեցու մասին, նշում է, որ խորանի հյուսիսային խաչքարի քիվը ջարդոտված է և այդ արձանագրությունը ներկայացնում է առանց մի հատվածի: Պեղման հենց առաջին օրը մենք գտել ենք այդ ջարդված կտորը չորս տառերով հանդերձ (աղ. III, 6): Այսինքն, կարելի եզրահանգել, որ եկեղեցու դահլիճը առնվազն 80 տարի ծածկված էր հողավազի զանգվածով:

Նույն Ս. Բարխուդարյանն իր կազմած ժողովածուի մեջ գրում է, որ հյուսիսային կողմի խաչքարի արձանագրության այն հատվածը որտեղ նշվում է՝ «…յանուն աստուծոյ ես Սահակ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկութիին եղբայր իմոյ Ղազարին. աղաիթս յիշեցէք» հրատարակիչների մոտ չի նշված ստույգ տեղադրությունը: Պեղումները ցույց տվեցին, որ այդ արձանագրությունն ամբողջովին պահպանված վիճակում գտնվում է խորանի հյուսիսային հատվածում գտնվող խաչքարի ներքնամասում:

Խորանի հարավային ու հյուսիսային հատվածներում տեղադրված միակտոր քարերից կերտված խաչքարերը ամրացված են կրաշաղախով, ընդ որում խաչքարերի ստորին դեկորատիվ տարրերը մասամբ ծածկված են շաղախով: Խաչքարերի ամբողջ մակերեսը քանդակազարդ է, ինչը բնորոշ է 15-17-րդ դարերի խաչքարային արվեստին [Պետրոսյան 2008, 202]:

Բավականին հետաքրքիր է հյուսիսային խաչքարի հարդարանքը. խաչքարի կենտրոնական խաչը տեղադրված է ուղղանկյուն հիմքով, սրածայր վերնամասով խորացված

խորանում: Այս խաչը պահում է 13-րդ դարի տարածված հարդարումը՝ բլթակներ թևերի լայնացող մասում: Կենտրոնական խաչը հենվում է արմավազարդի վրա: Վերջինս ուղեկցվում է 2 խաչերով՝ ձախ կողմի խաչի բլթակները անցքերով են, իսկ աջակողմյանը՝ ծածկված: Խորանից ներքև՝ քարի լավ հարթեցված մասում, տեղադրված է վերը նշված հիմնական արձանագրությունը:

Արձանագրությունից ներքև քանդակված է երկրաչափական զարդանախշով վարդյակ, որի երկու կողմերում պատկերված են խաչերը ձեռքերում երկու տղամարդ: Նշենք, որ 16-րդ դարի երկրորդ կեսում և 17-րդ դարում խաչքարերի հորինվածքը լրացվում է խաչերը ձեռքերում հավատացյալների պատկերաքանդակներով [Պետրոսյան 2008, 201-202]: Ձախ կողմի տղամարդու աջ ձեռքում սափոր է, իսկ աջ կողմի տղամարդու ձեռքում՝ գավաթ (աղ. II, 3): Կարելի է ենթադրել, որ այստեղ պատկերված են Սահակ եպիսկոպոսը և նրա եղբայր Ղազարը, որի հոգու փրկության համար կանգեցվել է խաչքարը: Նման քանդակներում «կենաց բաժակից» ըմպողի դերում հանդես է գալիս հանգուցյալը [Պետրոսյան, Երանյան 2022, 42-43]:

Հաշվի առնելով այն հավանականությունը, որ Մ. Բարխուդարյանցի նկարագրած դամբարան-մատուռը կարող էր գտնվել հարավային սրբարանի տակ, համապատասխան խաչքարի ստորոտում փորվեցին հետախուզական հորատներ: Մատուռի փոխարեն հայտնաբերվեց հիմնահողային թաղում: Հանգուցյալի կողմնորոշումը արևմուտքից արևելք է (աղ.V, 4):

Խորանի հարավային խաչքարից 0,20 մետր արևելք բացվել է ևս մեկ թաղում: Ընդհանրապես այդպիսի տպավորություն է ստեղծվում, որ եկեղեցին կառուցել են հին թաղումների վրա, որի ընթացքում շարժել են տապանաքարերը և մի քանիսն էլ օգտագործել են որպես շինանյութ:

Մաքրելով դահլիճը՝ բացել ենք հյուսիսային պատի հատվածը, որտեղ տեղադրած է մեկ տապանաքար: Եկեղեցու հյուսիսային պատից մնացել է մի հատված՝ կառուցված երկու խոշոր տապանաքարերից՝ երկարությունը 1,65 մետր, լայնությունը 0,65 մետր: Դրանցից մեկի վրա պատկերված է նետն ու աղեղը ձեռքին երկարաճիտ կոշիկով տղամարդ (աղ.V,1,3): Այդ պատին կից՝ դրսից բացվել է ևս մեկ թաղում հարավայինի զուգահեռ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ եկեղեցի-մատուռը կառուցվել է հին գերեզմատան տեղում, որի տապանաքարերն առատորեն օգտագործվել են նոր կառույցում:

Տապանաքարերը որպես շինանյութ օգտագործվել են նաև արևմտյան պատի մեջ՝ հյուսիս-արևմտյան անկյունում՝ ներսից, հարավ-արևմտյան անկյունում՝ դրսից: Ընդ որում վերջին տապանաքարի վրա պահպանվել է մի կերպարի դեմքը՝ ընդգծված աչքերով, բերանով և ծնոտով (աղ. V, 2): Եկեղեցու համարյա բոլոր հատվածներում բացահայտվել են թաղումներ, որոնք վնասվել են եկեղեցու կառուցման ժամանակ, իսկ դրանց տապանաքարերը կամ օգտագործվել որպես շինանյութ, կամ տեղաշարժվել:

Պեղումների շնորհիվ հուշարձանը մաքրվել ու դիտարժան է դարձել: Մաքրման աշխատանքները հնարավորություն են տվել նաև չափագրել եկեղեցին (աղ. I, 2, 3):

Պեղումները ցույց տվեցին, որ Կարմիր եկեղեցին միանավ թաղածածկ կառույց է՝ կիսաշրջանաձև խորանով: Ծովատեղի եկեղեցին կառուցվել է կոպիտ քարերով: Եկեղեցու միակ մուտքը գտնվում է հարավային կողմում: Արևելյան խորանի երկու կողմում տեղադրված են փոքր

ավանդատներ. հյուսիսային ավանդատան մուտքը բեմից է, իսկ հարավայինինը՝ դահլիճից. չափերն են՝ երկարությունը՝ 1 մետր, լայնությունը ՝ 0.60-0,65 մետր, բարձրությունը՝ 1,8 մետր։
Խորանի արևելյան հատվածում առկա է դեպի ներս լայնացող մի փոքրիկ պատուհան։

Եզրակացություններ։

- Եկեղեցի-մատուռը կառուցվել է հին գերեզմատան տարածքում, որի տապանաքարերն առատորեն օգտագործվել են նոր կառույցում։
- Հնարավոր է, որ Մակար Բարխուդարյանցի նշած երեք մատուռ-դամբարանները (եթե իրոք դրանք եղել են) լինեն կամ եկեղեցուց մոտ 30 մետր հյուսիս-արևմուտք, կամ խորանից 10 մ հյուսիս-արևելք (ինչի մասին պատմում են գյուղի բնակիչները)։

Գրականության ցանկ

Բարխուտարեանց Մ. 1895, Արցախ, տպարան «Արոր», Բագու, էջ 106-107։
Լալայեան Ե. 1897, Վարանդա, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, էջ 49–50։
Ջալալեանց Ս. 1858, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, էջ 332-334։
Պետրոսյան Հ. 2008, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 406 էջ։
Պետրոսյան Հ., Երանյան Ն. 2022, Արցախի կոթողային մշակույթը, Երևան, էջ 42-43։

Աղ. I

1



2



3

1- Ծովատեղ գյուղի հին գերեզմանոցի տարածքում գտնվող «Կարմիր եկեղեցի» համալիրը հարավ-արևմուտքից։

2, 3 - Եկեղեցու չափագրությունը (ճարտարապետ Մ. Սարգսյան)։

Աղ. II

1 2

3

1, 2 - «Կարմիր եկեղեցու» խորանի հյուսիսային ու հարավային կողմերում տեղադրված խաչքարերը՝ 1576 և 1586 թվականներով:

3 - Եկեղեցու խորանի հյոիսիսային խաչքարի քանդակը:

Աղ. III

1

2

3

4

5

6

1, 2, 3, 4 - Պեղումների ժամանակ ի հայտ եկած խաչքարերի և խեցանոթների բեկորներ։

5 - Եկեղեցու դահլիճում գտնված կրաքարե փոքր կտոր՝ արձանագրությամբ։

6 - «Կարմիր եկեղեցու» խորանի հյուսիսային խաչքարի քիվի բեկորը չորս տառերով հանդերձ:

Աղ. IV

1

2

1 - Խաչքարի ներքնամաս «ընտանեկան դիմանկարի» թեմայով:
2 - Եկեղեցու հարավային պատի մեջ ագուցված 12-13-րդ դարերի խաչքարեր:

Աղ.V

1

2

3

4

1 - Եկեղեցու հյուսիսային պատին ագուցված տապանաքարը:

2 - Տապանաքար եկեղեցու արևմտյան պատի հյուսիս-արևմտյան անկյունում:

3 - Եկեղեցու հյուսիսային պատին ագուցված տապանաքարը:

4 - Եկեղեցու դահլիճում բացված հիմնահողային թաղում: